

նեանի մի քանի այլ ակնյայտ սխալները՝ Մինաս Ամթեցու մասին, Չնքուշի վերաբերեալ :

«1687, Մկրտիչ Ջուղայեցոյ օրինակել կու տայ Մինաս՝ Սարգիսի գիրքը Թոխատ Ռձ եւ Չ ամին ի Յունուարի ժի, հինգերորդ ամի առաջնորդութեան իւրոյ նահանգիս Թոխատու» (Էջմիածին ք․ 370) :

Այս պարբերութիւնը ոչ միայն սխալ է, այլ հակասական, հոյ չէ թէ այդ սխալը պատկանի Հ․ Ն․ Ակինեանի՝ թէ «Էջմիածնի ք․ 370»ին, զոր մենք տեսած չենք :

Նախ՝ Ռձ եւ Չ Հայոց թուականը 1657ն է եւ ոչ թէ 1687ը : Եւ մենք գիտենք, թէ 1657ին Մինաս աակաւին երկու տարուան ծայրագոյն վարդապետ էր (քարոզելու գաւազան ունեցող), ինչպէս վերեւ տեսանք, ձեռնադրուած էր 1655ին, հետեւորար, չէր կրնար հինգ տարի առաջ (1652ին) առաջնորդ ըլլալ Թոխատու : Գիտենք նաեւ, թէ Մինաս 1656ին Չքուշէն Ուոհա գացած, քարոզած եւ վերադարձած էր Չնքուշ․ ուրեմն, նոյն իսկ գտնուած չէր կրնար ըլլալ Թոխատ այդ տարիներուն : Իսկ եթէ ընդունինք, թէ տառասխալի մը հետեւանքով ՌձԼՉն Ռձ եւ Չի է փոխուած, այսինքն իսկապէս թուականը 1687ն է, զարձեալ (եւ միշտ Հ․ Ն․ Ակինեանի վկայութեամբ) գիտենք, թէ 1687էն հինգ տարի առաջ, 1682ին Մինաս չէր կրնար առաջնորդ ըլլալ Թոխատի, որովհետեւ Ակինեան իր այդ յօդուածին մէջ կը գրէ — «1682 Նոյեմբեր 7ին Մինաս ՆՈՒԻՐԱԿ (այս եւ հետագայ բոլոր կրկնըդդումները մերն են) կը կարգուի Թոխատի վրայ, (Էջմիածնէն) կը հասնի հոն 1683 Փետր․ 6ին եւ կը պաշտօնավարէ մինչեւ 1684 Յունուար 17, այս կ'երթայ Ձեմուշ եւ իր շրջակայքը կը հովուէ» : Ուրեմն Հ․ Ն․ Ակինեան կ'ընդունի — եւ անկարելի էր չընդունիլ, քանի որ Օրագրութեան 20 էջերը (46աէն 65բ) այդ կը փաստեն — թէ յիշեալ հինգ տարիներուն, 1682-87, Մինաս Չնքուշի առաջնորդն էր եւ ո՛չ թէ Թոխատի, ուր որպէս ՆՈՒԻՐԱԿ գտնը-

ւած էր միայն 11¼ ամիս (1683 Փետր․ 6էն 1684 Յունուար 17) եւ անկէ գացած էր Չնքուշ, իր առաջնորդական աթոռը․․․ :

Տարօրինակ սխալ մըն ալ սա․ —

«Ինն կը բուի քէ Մինաս մինչեւ 1699 պահած էր Եղոկիայի քեմին առաջնորդութիւնը : Այժմ, երբ հրաւիրուեցաւ Երուսաղէմի Պատրիարքութեան արձոխն, պէտք էր հրաժարէր Եղոկիայի արքունէն : Եւ որովհետեւ այս միջոցին, երեք տարիէ ի վեր գրաւած էր պատրիարքական գահը Գալուստ Կայծակ Ամասիացին, առաջարկեց անոր Եղոկիոյ արքոր : Տեղի աուա Ամասիացին, ինչպէս կը խոստովանի իր երգիծականին մէջ» :

Ներհուն բանասէրի «ինն կը բուի»ն անհիմն է :

Առաջին․ վերեւ, Թորոս Աղբար Բ․էն մէջբերուած Չնքուշի վանքի պատմագրութեանէն (էջ 458-459) տեսանք, թէ Մինաս Ամթեցին Չնքուշի առաջնորդութեան աթոռ ժառանգած էր 1679ին, եւ 24 տարի նուիրակութեամբ շրջագայած է, միշտ իր վրան պահելով այդ տիրոջը եւ, 1703ին, Երուսաղէմ տանելով Չնքուշի Յովհաննէս վարդապետը, անոր ծայրագունութեան գաւազան տուած է եւ զբրկած է իր տեղը : Այս ճշմարտութեան վրկայ է նաեւ ՕՐԱԳՐՈՒԹԻԻՆԵԼ («ՌձԾԲ - 1703 - Ապրիլ 4, Նոր Կիրակի, ի մէջ Սբ․ Յարութեան Դեմբուշի Տէր Ովանէսին գաւազան ետու Աստուծով») :

Երկրորդ, նոյնքան յստակ է այն փաստը, զոր կը հայթայթէ Տէր Յովհաննէս սեանց Եպօ․ («Ժամանակագրութիւն Երուսաղէմի Պատրիարքութեան», էջ 404-414) երկարօրէն նկարագրելով, թէ ինչպէս Գալուստ Կայծակ, ո՛չ թէ «երեք տարիէ ի վեր գրաւած էր պատրիարքական գահը», այլ 1697ին վախճանեալ Յովհաննէս Պատրիարքին մահէն ետք, Կ․ Պոլսոյ մէջ ինքզինք Երուսաղէմի Պատրիարք հռչակելով, գաւառները մեկնած է Երուսաղէմի անունով դրամ հանդանակելու․ Երուսաղէմ գացած չէ անգամ, եւ անոր այդ չարաչահութեան վրայ, Երու-